



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 171/171-2019

29. 04 2019թ.

ք. Արտաշատ

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում 2019 թվականի մայիսի 03-ից մինչև մայիսի 17-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր, ընտրանքային կարգով իրականացնել ներքին աուդիտ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ և 8-րդ գլուխների պահանջների կատարման նպատակով:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2016, 2017, 2018 թվականների ընթացքում, իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Հաստատել աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի անդամների և հրավիրված մասնագետների ցանկը՝ համաձայն հավելվածի:
4. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

Восстановимая подпись

X

ԳԱՐԻԿ ՄԱՐԳՍՅԱՆ

ՑԱՆԿ

ԱՌԻԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

- 1☑ Ներքին աուդիտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Գևորգ Բաղդասարյան
- 2☑ Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Սուրեն Քարամյան
- 3☑ Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Ատոմ Ատոմյան
- 4☑ Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Անի Մարտիրոսյան
- 5☑ Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության
ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Նաիրա Հայրապետյան
- 6☑ Առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ՝ Լիլիթ Հակոբյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

 Ա. ԴԵՐՄՈՅԱՆ